

Արշակունի և արծրունի ցեղերուն բնադրոյմ բարձրաթոյի հանձնատակն մոռացած չէ իւր բնաշխարհը. երբեմն կ'առանձնանայ Մասիսի ժայռերուն լոկի անձաւաց մէջ, երբեմն կը բարձրանայ կը կորսուի ամպերուն մէջ, ուսկից իւր սուր աչուըները կը բեւեռէ որսին վրայ: Ականատես* մը զարմացմամբ կը գրէ մեր աշխարհի արծիւներուն վրայ. « Մեծամեծ արծիւք կը թռչին Արարատայ չորս կողմը, անհանդարտք և ահաբեկք. այդչափ թեւատարած մեծութիւն ունեցող թռչուններ երբէք տեղ մը տեսած չեմ »: Եւ իրօք այնքան մեծ են, որ մինչեւ անգամ կը յանդգնին յափշտակել գեղջուկներուն մանուկները և գառնուկները:

Ասոր ընկեր և բարուք նման, բայց տեսքով աւելի ահաւոր թռչունն, նմանապէս իւր հրաժեշտի ողջոյնը չէ տուած մեր երկրին. այն թռչունն՝ զոր Հերայի և Արիսի կը նուիրէ դիցապաշտն, որ Կովկաս լեռանց վրայ Արամազդէն կապուած հրագող Պառմէթեւսին լեարգը կը կրծէ, որուն վրայ կը ծնամոլ եգիպտացին կը գուրգուրայ, և որ վերջապէս Անգեղտան մեծ ցեղին նախարարն՝ իրեն գերգաստանին սեփականեր է նորա աւունը:

Ասոնց նման ուրիշ յափշտակիչ հաւեր կը յիշուին մեր կողմերը, ինչպէս Շիկանգը, Վարազաշաւ, Կործ կամ Լաշհաւ, Շահէն, Բազէ, և այլն. բայց յետինս ոչ միայն կը յիշուի՝ այլ և առանձին նկարագրութեան և արժանի է: Ինչպէս արեւմտեան արքայազանց և իշխանազանց սովորական զուարճութիւններէ մին էր՝ բազէով որսի երթալն, այսպէս նաեւ հայ արքունեաց և իշխանազանց մէջ: Արշակունեաց ժամանակ՝ աւագ նախարարներէ մի քանին թագաւորին որսի բազէները կը բերու պատուաւոր պաշտօնն ունէին, մանաւանդ իրենց վառվառն երիտասարդ որդիքն, ինչպէս Արարատայ գաշտը նկարագրող պատմիչն կը գրէ. « Եւ շատք ի մանր մանկանց նախարարաց որդւոցն՝ դաստիարակօք և ծառայիւք, զայլ և այլ սեասի թռչնոցն որսացեալ բազէիւք, դարձեալ բերիցին ի յաճումն ընթերեաց ուրախութեան, և այսպէս առլցեալք իւրաքանչիւր որսով գնան ուրախացեալք** ». և այս պատճառաւ իսկ այննախարարք Բագեռանիք կոչուեցան***:

Բագէին մերձաւոր գիշատիչ թռչունն Յին՝ կը տեսնեմք Արարատայ, Արցախու և Կիլիկիոյ գաւառներուն մէջ, որ իւր սակաւ օգտակարութեան հետ ունի մեծամեծ փնասներ. վասն զի եթէ մէկ կողմէն մշակութեան փնասակար անասունները կը ջարդէ, միւս կողմէն բազմաթիւ օգտակար թռչնիկներ կը հայածէ կամ կը յօշոտէ:

Բայց այսպէս չէ արքունի Բուէճն, որ Հայաստանի անտառաց մէջ գիշերները իւր քրոշ քրոշ լալական ձայնը հնչեցընելով, անխնայ կը գիշատէ հայ մշակին բուսաբերութեան փնասակար կենդանիները:

Յանկարծ միտքս կը թռչի Արցախու կոյս անտառաց մէջ, ուր սեւափետուր թռչուն մ'է, որ իմ հետաքրքրութիւնս կը գրաւէ. ահաւասիկ նա օձապտոյտ զուգահեռական զիծ մը քաշելով, կը բարձրանայ բազմադարեան ալեւոր ծառի մը վրայ, կանգ կ'առնու, իրեն գորսուր կտցով կը ծակէ ծառը և լեզուն դուրս կը թողու, մըլիւնք ահաբեկք և շուարած՝ ծառին ճեղքերէն դուրս ելնելով՝ կը դիզուին նորա յորձնուտ լեզուին վրայ, և խորամանկ թռչունն իսկոյն լեզուն ներս քաշելով խեղճ միջատները կը կլլէ: Բայց իրմէ աւելի վարպետ և շարածճի է նորա միւս ընկերն*, որ զմեզ ալ աւելի կը զարմացընէ. միջքանի անգամ կը զարնէ կտցով ծառին, և շուտ մը կը թաքչի, նոյն աղաղակէն՝ հազիւ մը փրամիտ միջիւնն բոյնէն դուրս կ'ելնէ, մէկէն կը յարձակի վրան և զայն կը լափէ: Արցախու բնակիչք այս երկու խորամանկ թռչունները Կտցահար կամ Ծառակուտկուտ կը կոչեն:

Կտցահարք մինչ իրենց վարպետութեամբ մեր ծիծաղը կը շարժեն, անդին գիշերասէր հաւ մը՝ Անոյ կիսակործան աւերակաց վրայ թառած՝ մահազուշակ ողբերգովն կը տխրեցընէ զմարդ և կարծես սև քօղ մը կը տարածէ գիշերուան տխուր լուծեան վրայ: Դա այն թռչունն է՝ որ մեր կողմերը գեղեցիկ փետրազարդ պատմուճան մը կը զգենու, այն հաւը** որուն կերպարանքը կ'առնու մերթ Ուիմրոսի գոռոզ իշխեցող « հայրն ատտուածոց և մարդկան »: Սակայն թողլով այդ տխուր հաւը, և հեռանալով աւերակներէն և ծաղրական հեթանոս շաստուածներէն, մտնենք դարձեալ անտառաց մէջ:

* Շանոր. Ողեւորութիւն ընդ Հայաստան Ռոսիոյ:

** Ղազար փարպեցի 27:

*** Տակաւին կը գտնուին Արարատայ և Կարնայ կողմերը ընտիր բազէներ, սրոնցմէ որսոր-

դութեան լաւ կը թուածն մինչեւ 200 ֆրանք կ'արժէ. ինչպէս եւրոպացի ճանապարհորդ մը կը գրէ (Vital Cuinet. « La Turquie d'Asie » 1893. Հատ. Ա. էջ 153):

* Կանաչ փայտփոր:
** Կլու: